

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՆՆԵՐԻ ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատմականորեն պարենային հաշվեկշիռների նպատակը եղել և մնում է դիտարկվող պետությունում պարենային ապահովության իրավիճակի մասին ամբողջական և համապարփակ տեղեկատվության ներկայացումը: Պարենային հաշվեկշիռներ կազմելու անհրաժեշտությունն ակներև դարձավ Երկրորդ աշխարհամարտից հետո: Դա պայմանավորված էր պարենի արտադրության և մատակարարման ընդհատումներով: Պարենային ապահովության դերը համապատասխանորեն կարևորվում է նաև տնտեսական աճի տեսանկյունից: Պարենային հաշվեկշիռներն անհրաժեշտ են որոշակի ժամանակահատվածում երկրի պարենային ապահովության ամբողջական նկարագրության և պարենի անբավարար մատակարարման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Պարենային հաշվեկշռի հատվածները

Ամբողջական առաջարկ

Առաջարկը ներառում է արտադրության, ներմուծման և ժամանակաշրջանի սկզբի համար առկա պաշարների ցուցանիշները: Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում պաշարների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման առումով առկա են որոշակի տեխնիկական բարդություններ, այդ իսկ պատճառով պարենային հաշվեկշռում սովորաբար կիրառվում են այդ ցուցանիշի գնահատման որոշակի մոտեցումներ: Արտադրությունը սույն հատվածի կարևորագույն ցուցանիշն է, որը ներմուծման տվյալների հետ միասին հանդիսանում է ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալը:

Պարենամթերքի օգտագործման ուղղություններ

Սույն հատվածը ներառում է հետևյալ հիմնական ցուցանիշները՝ որպես սննդամթերք սպառում, անասնակեր, վերարտադրում (սերմացու, ինկուբացիա և այլն), արտահանում, կորուստներ և օգտագործման այլ ուղղություններ, պաշարներ հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Վերջնական սպառման ցուցանիշը հանդիսանում է պարենային հաշվեկշռի առանցքային ցուցանիշներից մեկը, որը բնութագրում է տվյալ ապրանքատեսակի ներքին սպառման մակարդակը և հաշվարկվում է որպես ամբողջական առաջարկի և պարենամթերքի օգտագործման մյուս բոլոր ուղղությունների տարբերություն: Այն հանդես է գալիս որպես հաշվեկշռող ցուցանիշ:

Այլ տեսակի սննդամթերքի արտադրությանն ուղղվող որոշակի պարենամթերքի քանակը հաշվեկշռում հանդես է գալիս որպես մուտքային ցուցանիշ:

Սերմացու օգտագործող ապրանքատեսակի քանակը հաշվարկվում է ցանքատարածությունների և ցանքի միջին ցուցանիշների հիման վրա:

Կորուստների ցուցանիշը հաշվարկվում է Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) առաջարկած գործակիցների միջոցով, որոնք որոշակի երկրի պայմաններից ելնելով կարող են ճշգրտվել:

Սույն հաշվեկշիռներում ներկայացված է նաև ինքնաբավության աստիճանի ցուցանիշը, որը հաշվարկվում է որպես պարենամթերքի արտադրության և առաջարկի ցուցանիշների հարաբերություն:

Պարենային հաշվեկշռում ընդգրկվող ապրանքատեսակների կազմը (ցանկը) պայմանավորված է տվյալ երկրում առավել լայն սպառում ունեցող ապրանքատեսակներով:

Այդ իսկ պատճառով փոքրածավալ սպառում ունեցող ապրանքատեսակների վերաբերյալ հաշվեկշիռներ չեն ներկայացվում:

Հայաստանի Հանրապետության համար պարենային հաշվեկշիռները կազմվում են առաջին անգամ, ապագայում դրանք կատարելագործելու, բարելավելու և զարգացնելու ակնկալիքով: